



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ
СОБСТВЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 4(44)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2007 թվականի դեկտեմբերի 17-ից

ՄԱՍ I

ԳՅՈՒՏԵՐ	4, 85
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 87</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ	21, 101
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>23, 103</i>
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	24, 104
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	<i>26, 106</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	32
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	<i>34</i>
<i>Տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների մասին</i>	<i>67</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>71</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ	73
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	76
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	107

ՄԱՍ II

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	4
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	<i>6</i>

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издаётся Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 85
Сведения о выданных патентах.....	6, 87
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	21, 101
Сведения о выданных патентах.....	23, 103
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	24, 104
Сведения о выданных патентах.....	26, 106
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	32
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания ...	34
Сведения об общеизвестных товарных знаках.....	67
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	71
УКАЗАТЕЛИ.....	73
СООБЩЕНИЯ.....	76
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	107

ЧАСТЬ 2

ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	4
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	6

CONTENTS

PART 1

INVENTIONS.....	4, 85
Information on granted patents.....	6, 87
UTILITY MODELS.....	21, 101
Information on granted patents.....	23, 103
INDUSTRIAL DESIGNS.....	24, 104
Information on granted patents.....	26, 106
TRADE MARKS.....	32
Information on registered trade marks and service marks	34
Information on well-known trade marks.....	67
Information on renewal of effect of trademark registration	71
INDEXES.....	73
REPORTS.....	76
TWO-LETTER CODES.....	107

PART 2

TRADE MARKS.....	4
Information on registered trade marks and service marks	6

q3ntstr

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A1 Գյուտի հիմնական արտոնագիր A2 Գյուտի նախնական արտոնագիր B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄՄԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 2024 (13) A2
A01C 3/00
(21) **AM20070017** (22) **14.02.2007**
(42) 02.05.2007
(71) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Չո-վա Գեղամի Մարտիրոսյան (AM)
(72) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Չո-վա Գեղամի Մարտիրոսյան (AM)
(73) Գուրգեն Մարտիրոսյան, 0069, Երեւան, Գո-գուլի 5, բն.6 (AM), Չովա Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երեւան, Գոգուլի 5, բն. 6 (AM)
(54) **Թմբագոյացնող մեքենա**
(57) Գյուտը վերաբերում է մեխորանտների եւ պարարտանյութերի կույտերից թմբեր պատ-րաստող, այնուհետեւ հողի մակերեւույթին ցրող մեքենաներին:
Մեքենան ունի հենարանային անիվներով շրջանակ, բաժնավորող պատուհանով հետին պատ, սիմետրիայի առանցքի նկատմամբ տար-բեր անկյունների տակ տեղակայված հիմնա-կան եւ լրացուցիչ կողային վահաններ եւ նե-տիչ: Կողային վահանների միջեւ տեղակայված են ուղղահայաց առանցքների շուրջը պտտվող քերակային թմբուկներ:
Նվազեցվում է քարշային դիմադրությունը, բարձրացվում է թմբերի որակը, 3 նկ.:

(57) Գյուտը վերաբերում է կաթի եւ կաթնամթեր-քի արդյունաբերությանը, մասնավորապես՝ ուղ-ղանկյուն, այդ թվում եւ քառակուսի, պանրագ-լուխների կաղապարման եւ մամլման գործըն-թացին:

Մամլակաղապարն ունի վերին եւ ստորին հիդրոմիսոցներ, վերին եւ ստորին կափարիչ-ներ, սեղմիչներ, կողմային չորս նիստ՝ դրանց վրա ամրակցված չորուկներով, ուղղորդներ, վռաններ, սալիկներ եւ սալիկներին միակցված զսպանակներ: Այն ներառում է նաեւ վերին կա-փարիչի կենտրոնում տեղակայված ավտոմատ կարգավորվող փական, որն ունի ամրակապի միջոցով հիդրոմիսոցին ամրակցված լցման խո-ղովակ, կափարիչի անցքերով անցնող շարժա-կան ուղղորդ բույթեր եւ բաժանարար կոն: Բույ-թերը զուգահեռ են կափարիչի շարժման ուղղու-թյանը, մեկ ծայրերով ամրակցված են բաժանա-րար կոնին, մյուս ծայրերը զսպանակված են ճի-գի կարգավորման հնարավորությամբ: Բաժա-նարար կոնի հիմքային մակերեւույթը պատված է ծակոտած թիթեղով:

Բարձրացվում է մամլակաղապարի ավտո-մատացման մակարդակը, ապահովվում է պան-րահատիկի փակ եղանակով լցումը մամլակա-ղապար, 1 նկ.:

(51) (2006) (11) 2025 (13) A2
A01J 25/00
(21) **AM20070020** (22) **26.02.2007**
(42) 01.06.2007
(71) Սամվել Սմբատի Մանուկյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Հրաչյա Ավետիքի Ավետիսյան (AM)
(72) Սամվել Սմբատի Մանուկյան (AM), Լեւոն Թումանի Մանանդյան (AM), Հրաչյա Ավետիքի Ավետիսյան (AM)
(73) Սամվել Սմբատի Մանուկյան, 3101, Գյում-րի, Ֆուրմանովի փող. 2-րդ նրբ. 12ա (AM), Լեւոն Թումանի Մանանդյան, 3101, Գյումրի, Տիգրան Մեծի 116/088 (AM), Հրաչյա Ավետիքի Ավետիս-յան, 3101, Գյումրի, Չերազի 19, բն. 12 (AM)
(54) **Պանրի մամլակաղապար**

(51) (2006) (11) 2026 (13) A2
A23G 3/34
(21) **AM20070055** (22) **14.05.2007**
(42) 02.07.2007
(71) «Հայաստանի պետական ագրարային հա-մալսարան» պետական ոչ առեւտրային կազմա-կերպություն (AM)
(72) Վարդան Նիկողոսի Յավրույան (AM), Արամ Իվանի Նազարյան (AM), Հասմիկ Ժիրայրի Տեր-Մովսիսյան (AM), Մեհդի Հեյդարի Իզադի (IR)
(73) «Հայաստանի պետական ագրարային հա-մալսարան» պետական ոչ առեւտրային կազմա-կերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Մրգերից քաղցրապատված կոնֆետների պատրաստման եղանակ**
(57) Թարմ ծիրանը, դեղձը կամ սալորը չորաց-

նում են մինչեւ 20-30%-անոց մնացորդային խոնավություն: Չորացրած միրգն ընկղմում են 96%-անոց էթիլային սպիրտի մեջ 30-60 վայրկյան տեւողությամբ 20°C ջերմաստիճանում, ապա չորացնում միկրոալիքային վառարանում 30-180 վայրկյան տեւողությամբ 50-60°C ջերմաստիճանում եւ պատում են շոկոլադե քաղցրաշերտով: Շոկոլադե քաղցրաշերտը պատրաստում են օգտագործելով խառնուրդ, որը պարունակում է (զանգվ.%) . շաքարի փոխարինիչ՝ 50,0-51,5, կակաո տրորած՝ 27,2-28,0, կակաոի յուղ՝ 20,8-21,3, արեւածաղկի ֆոսֆատիդային խտամթերք՝ 0,4-0,5, համեմունքների խառնուրդ՝ 0,1 - 0,2: Որպես շաքարի փոխարինիչ օգտագործում են քսիլիտ կամ սորբիտ, իսկ որպես համեմունքների խառնուրդ՝ անանուխի, կիտրոնի ու նարնջի բնահյութեր եւ վանիլի տրորած պտուղներ բաղադրամասերի զանգվածային 1:1:1:1 հարաբերակցությամբ:

Ապահովվում է մրգերից դիետիկ քաղցրապատված կոնֆետների ստացումը:

աղ, շաքարավազ, նատրիումի նիտրիտ, խառնում եւ ստացված խառնուրդը հասունացնում 6-7 օր 2-4 °C ջերմաստիճանում: Խառնուրդին ավելացնում են մշակված ձկան միսը, խոզի ճարպի կտորներ, մանրացնում են մսահատիչով 4-5 րոպե եւ ավելացնում սեւ պղպեղ, կարմիր պղպեղ, չորացրած թարխուն եւ խառնում խառնիչով՝ ստանալով լցոն: Լցոնը ներարկում են 25-30 մմ տրամագիծ ունեցող թաղանթների մեջ, նստեցնում 6-7 օր 6-8°C ջերմաստիճանում, ապիստում 3-4 օր 28-30°C ջերմաստիճանում եւ տեղադրում չորացման խցեր 18-20 օր 10-12°C ջերմաստիճանում: Բաղադրամասերը վերցված են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%) . ձկան միս առանց ոսկրազատման՝ 70,0-80,0, տավարի միս՝ 10,0-15,0, խոզի ճարպ՝ 5,0-10,0, սեւ պղպեղ՝ 0,1-0,2, կարմիր պղպեղ՝ 0,1-0,2, շաքարավազ՝ 0,1-0,2, չորացրած թարխուն՝ 0,2-0,4, կերակրի աղ՝ 2,5-3,0, նատրիումի նիտրիտ՝ 0,003-0,004:

Բարձրացվում է մթերքի սննդային արժեքը:

(51) (2006) (11) 2027 (13) A2
A23L 1/325
A23L 1/317
(21) AM20070021 (22) 28.02.2007
(42) 02.05.2007
(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
(72) Աշոտ Արմենի Աղաբաբյան (AM), Ռազմիկ Արշակի Բեգլարյան (AM), Վլադիմիր Մկրտիչի Յովհաննիսյան (AM), Լեւոն Անդրանիկի Գուլքանյան (AM)
(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Հումապիտած երշիկի արտադրության եղանակ**
(57) Հումապիտած երշիկի արտադրության համար ձուկը մաքրում են, լվանում, աղադրում, հասունացնում 3-4 օր 4°C ջերմաստիճանում եւ լվանում, ընդ որում օգտագործում են սեւանյան սիգ (*Coregonus lavaretus sevanicus*) ձկան միս առանց ոսկրազատման: Տավարի միսը մանրացնում են մսաղացով, ավելացնում կերակրի

(51) (2006) (11) 2028 (13) A2
A23N 5/00
(21) AM20070023 (22) 09.03.2007
(42) 01.06.2007
(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
(72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Վարդան Նիկողոսի Յավրույան (AM), Սարգիս Եղիազարի Բադուրյան (AM), Լեւոն Յուզիկի Համբարձումյան (AM)
(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74
(54) **Գետնանուշի պտղապատյաններից պտղահատիկների անջատման կայանք**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ գետնանուշի պտղապատյաններից պտղահատիկների անջատման կայանքներին:

Կայանքն ունի բեռնման բունկեր, իրան, դրա մեջ տեղակայված կալսիչ թմբուկ՝ ապակենտրոն կալսատախտակով, որը թմբուկի նկատ-

մամբ ունի կարգավորման հնարավորություն:

Կալսիչ թմբուկն ունի նշանափոխ ուղղություններով պտտման հնարավորություն, ընդ որում, մշակվող զանգվածի հոսքի տեղաշարժման ուղղությամբ թմբուկի պտտման անկյունն ավելի մեծ է, քան հակադարձ պտտման անկյունը: Թմբուկի տակ տեղակայված է զսպանակած թեք թրթռաշերտի եւ դրա թեքության անկյան կարգավորման մեխանիզմ: Աղացած զանգվածը լցվում է հողմահարման խուց, որն ունի օդամղիչ, օդի հոսքի ելքում տեղակայված թիթեղավոր ցանց, օդահոսքի անդրադարձիչ եւ պտղահատիկների ու պտղապատյանների հավաքման զետեղարաններ:

Պարզեցվում է կայանքի կառուցվածքը, բարձրացվում է զանգվածի մաքրման որակը, 4 նկ.:

(51) (2006) (11) 2029 (13) A2
A43B 13/00

(21) AM20070053 (22) 08.05.2007

(42) 02.07.2007

(71) Աշոտ Ռաֆիկի Պապոյան (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան (AM)

(72) Աշոտ Ռաֆիկի Պապոյան (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան (AM)

(73) Աշոտ Ռաֆիկի Պապոյան, 3118, Գյումրի, 26 Կոմիսարների 60 (AM), Արուսյակ Յովհաննեսի Մանուկյան, 3106, Գյումրի, Լազոյի, 47 (AM)

(54) Կոշիկի տակացու

(57) Գյուտը վերաբերում է միջատակ-վերհակիչ կրող կոշիկի տակացուներին:

Միջատակի եւ ներբանի միջեւ տեղակայված է վերհակիչը, որը կրկնամասով ամրակցվում է կրունկին, իսկ առաջամասով հենվում է ներբանի մեջ կոշտ ամրակցված թիթեղի ելունին:

Բացառվում է վերհակիչի երկայնական տեղաշարժը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2030 (13) A2
A61B 1/00

A61K 36/00

A61K 31/713

(21) AM20070024 (22) 12.03.2007

(42) 02.05.2007

(71) Ռաֆաել Վաչիկի Մելքոնյան (AM)

(72) Ռաֆաել Վաչիկի Մելքոնյան (AM)

(73) Ռաֆաել Վաչիկի Մելքոնյան, 0014, Երեւան, Շիրվանզադեի 7, բն. 2 (AM)

(54) Վարակային հիվանդությունների բուժման եղանակ

(57) Հիվանդին նշանակում են հակավարակային միջոց, որը ներառում է դեղաբույսերի չոր հավաք եւ երկթել ՌՆԹ-ի կալցիումական աղ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). դեղաբույսերի չոր հավաք՝ 37,0, երկթել ՌՆԹ-ի կալցիումական աղ՝ 63,0: Ընդ որում դեղաբույսերի չոր հավաքի բաղադրամասերը վերցված են հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). ալոնճենի՝ 22,0, կանթեղախոտ՝ 19,8, կղմուխ բարձր՝ 16,5, ձիական սովորական՝ 7,7, սպանդ՝ 3,3, խատուտիկ՝ 5,5, եղերդակ՝ 4,4, կծոխուր՝ 3,3, մատուտակ՝ 2,2, եզան լեզու՝ 3,3, Էլեուտերոկոկ փշավոր՝ 1,9, մեղրածուծ՝ 2,2, անանուխ՝ 1,6, քաջվարդի արմատներ՝ 2,2, եղեսպակ՝ 3,8:

Բարձրացվում է բուժման արդյունավետությունը, կանխվում են կողմնակի բարդացումները:

(51) (2006) (11) 2031 (13) A2
A61B 17/00

(21) AM20070005 (22) 16.01.2007

(42) 01.03.2007

(71) Աշոտ Գարուշի Թորոսյան (AM)

(72) Աշոտ Գարուշի Թորոսյան (AM)

(73) Աշոտ Թորոսյան, 0047, Երեւան, Արմեն Արմենակյանի փող. 1-ին նրբ. 21 (AM)

(54) Վերքի վիրաբուժական փակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է պլաստիկ վիրաբուժությանը, մասնավորապես՝ վերքերի փակման եղանակներին:

Վիրաստեղով մաշկը ծակում են վերքի եզրից 0,5 սմ հեռավորության վրա, անցնելով մաշկի եւ ենթամաշկային ճարպաբջջանքի շերտերի միջով՝ վիրաստեղը հասցնում են վերքի ամենախոր կետին եւ այն անցկացնում մյուս կողմը, կատարում են վերքի մակերեւութային մասը եւ ձգում են թելը: Ընդ որում վիրաստեղը անցկացնելով վերքի մյուս կողմը, դուրս չհանելով մաշկի մակերեւութ՝ հորիզոնական կերպով անցկաց-

նում են մաշկի շերտով, դուրս են հանում վերքի եզրից եւ մտցնում են վերքի առաջին կողմի մաշկի շերտի մեջ՝ եզրից նվազագույն հեռավորության վրա:

Ապահովվում է վերքի եզրերի ճշգրիտ համադրումը:

(51) (2006) (11) 2032 (13) A2
A61C 8/00

(21) AM20070025 (22) 14.03.2007
(42) 02.05.2007

(71) Սուրեն Սերգեյի Ավետյան (AM), Արթուր Վլադիմիրի Պապիկյան (AM), Գեղամ Ռաֆիկի Սահակյան (AM), Արմեն Մարտինի Մարտիրոսյան (AM)
(72) Սուրեն Սերգեյի Ավետյան (AM), Արմեն Մարտինի Մարտիրոսյան (AM), Արթուր Վլադիմիրի Պապիկյան (AM), Գեղամ Ռաֆիկի Սահակյան (AM)

(73) Սուրեն Սերգեյի Ավետյան, 0033, Երեւան, Գյուլբենկյան 40, բն. 55 (AM), Արթուր Վլադիմիրի Պապիկյան, 0033, Երեւան, Զր. Զոչարի 24, բն. 29 (AM)

Գեղամ Ռաֆիկի Սահակյան, 0001, Երեւան, Թումանյան 9ա, բն. 70 (AM), Արմեն Մարտինի Մարտիրոսյան, 0086, Երեւան, Շիրակի 13, բն. 28 (AM)

(54) **Ենթավերնոսկրային ձուլածո իմպլանտատի պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես՝ միաձույլ տիտանե ենթավերնոսկրային իմպլանտատի պատրաստման եղանակներին:

Պատրաստում են լցանային համակարգով հրահեստ կաղապարակ, ձեւավորում են մոմե հիմքային մաս ունեցող իմպլանտատի մոդել, որի վրա տեղադրում են պարուրակի համար նախատեսված անցք ունեցող իմպլանտատի գլխիկի պլաստմասսայե նախապատրաստվածք: Այնուհետեւ կաղապարում են, հեռացնում մոդելը, լցնում տիտանի համահալվածքը, տեղահանում, ենթարկում մեխանիկական եւ էլեկտրաքիմիական մշակման, որից հետո պարուրակահանում են գլխիկի անցքը:

Բարձրացվում է իմպլանտատի կիրառման եւ բուժման արդյունավետությունը:

(51) (2006) (11) 2033 (13) A2

A61K 8/00

A61Q 19/00

(21) AM20070007 (22) 23.01.2007

(42) 02.04.2007

(71) Վաղարշակ Վարուժանի Մադոյան (AM)

(72) Վաղարշակ Վարուժանի Մադոյան (AM)

(73) Վաղարշակ Վարուժանի Մադոյան, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ 12/17 (AM)

(54) **Մաշկի խնամքի կոսմետիկ պատրաստուկ**

(57) Գյուտը վերաբերում է կոսմետիկ պատրաստուկներին եւ կարող է կիրառվել մաշկի խնամքի համար:

Կոսմետիկ պատրաստուկը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. %. գինու սպիրտ 96%-անոց՝ 75 - 77, լեւոմիցետին՝ 3,5 - 4, ասպիրին՝ 3,5 - 4, ստրեպտոցիդ՝ 2,2 - 2,4, բուրական թթու՝ 3,5 - 4 եւ ջուր՝ 9 - 11:

Ապահովվում է պզուկների արդյունավետ ապաքինումը:

(51) (2006) (11) 2034 (13) A2

B02C 13/00

(21) AM20070030 (22) 16.03.2007

(42) 01.06.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Արմեն Ստեփանի Մարգարյան (AM), Գեորգ Հայկազի Դանիելյան (AM), Արամ Գրիգորի Մազմանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Մանրիչ**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաներին, մասնավորապես՝ կերեր մանրացնող սարքերին:

Մանրիչ, որն ունի իրան, մանրացվող նյութի մատուցման բունկեր՝ իր կարգավորիչով, ցանցավոր հատակով գլանաձեւ մաղ, իրանի վրա տեղակայված էլեկտրաշարժիչ, որի լիսեռի վրա ամրակցված է մուրճիկային ռոտոր, օդատար առվակով մանրացված նյութի ուղղորդիչ եւ մանրացված նյութի հավաքման պարկ: Մաղն ունի հակակտրիչ թիթեղներ, որոնք շախմատաձեւ դասավորված են ներքին մակերեսային վրա,

եւ պատուհան, որին արտաքին կողմից կցված է զսպանակած սահափական:

Բացառվում է մանրման խցիկում օտար մարմինների կուտակում, բարձրացվում է մանրիչի արտադրողականությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 2035 (13) A2
B02C 18/06

(21) AM20070029 (22) 16.03.2007
(42) 02.07.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ստյոպա Ենոքի Մարգարյան (AM), Գեորգ Հայկազի Դանիելյան (AM), Գոհար Լիպարիտի Վարդանյան (AM), Սամվել Լիպարիտի Սահակյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Արմատապտուղ մանրացնող մեքենա

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ անասնակեր մանրացնող մեքենաներին, եւ կարող է օգտագործվել անասնապահության բնագավառում:

Մեքենան ունի իրան, իրանի վրա տեղակայված եւ իր ստորին մասում մանրացված զանգվածի ելքի պատուհան ունեցող մանրացվող նյութի մատուցման բունկեր: Բունկերի տակ ամրակցված է էլեկտրաշարժիչ, որի լիսեռի վրա ամրակցված են բունկերում տեղակայված, դանակներ ու թիակներ ունեցող սկավառակ եւ կոնաձեւ ուղղատու: Բունկերում տեղակայված են նաեւ մանրացվող նյութի մատուցման եւ կտրման ընթացքում արգելակիչ հանդիսացող հատվող վահանակներ, որոնց անկյունը դանակների պտտման հարթության նկատմամբ պայմանավորված է մանրացվող նյութի տեսակով եւ չափով:

Բարձրացվում է մեքենայի արտադրողականությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 2036 (13) A2
B27L 7/00

(21) AM20060163 (22) 25.09.2006
(42) 03.01.2007

(71) Պատվական Ռուբենի Հախինյան (AM), Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM)

(72) Պատվական Ռուբենի Հախինյան (AM), Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM)

(73) Պատվական Ռուբենի Հախինյան, Երեւան, Մ.Մելիքյան 13, բն.23 (AM), Կարեն Վոլոդյայի Գասպարյան, Երեւան, Լեփսիուսի 10ա, բն.18 (AM)

(54) Փայտահատման ճղատող սեպ

(57) Գյուտը վերաբերում է կտրող գործիքներին:

Փայտահատման ճղատող սեպն իրականացված է մի կտորից եւ բաղկացած է ուժային հարվածներն ընդունող գլխամասից, սրածայր ներքնամասից եւ վերնամասից: Սրածայր ներքնամասը ներառում է ստորին հիմնական բուրգի կողերի հետ համատեղված փայտակոճղը ճղատող կողերը, ընդ որում ստորին հիմնական բուրգի կողերը սեպի առանցքի հետ կազմում են անկյուն: Վերնամասը ներառում է ճղատվող փայտը հրող հանդիպակաց տեղամասերը, որոնք իրականացված են սեպի առանցքի նկատմամբ թեքման δ անկյունով, որը մեծ է, քան α անկյունը: Ստորին հիմնական բուրգն իրականացված է քառակուսի հատվածքով: Փայտակոճղը ճղատող կողերն իրականացված են երկթեք, ընդ որում ստորին հատվածամասում դրանք դասավորված են ստորին հիմնական բուրգի չորս կողերով, իսկ վերին հատվածամասում դրանք համատեղված են սեպի առանցքի նկատմամբ α -ից ավելի մեծ β թեքման անկյամբ ձեւավորված վերին հիմնական բուրգի կողերին: Ճղատվող փայտը հրող տեղամասերը դասավորված են հիմնական բուրգերի նկատմամբ 45° -ով պտտված կողերով, որոնց սեպի առանցքի հետ կազմած δ անկյունն ավելի մեծ է, քան β անկյունը:

Բարձրացվում են փայտակոճղի ճղատման արդյունավետությունը, սեպի ամրությունն ու երկարակեցությունը, 5 նկ.:

(51) (2006) (11) 2037 (13) A2
B30B 11/22

B29C 47/00

A61C 13/20

(21) AM20070054 (22) 10.05.2007

(42) 01.06.2007

(71) Միքայել Յուրիի Թունյան (AM), Լեւոն Գրիգորի Գրիգորյան (AM), Գայանե Սմբատի Բաբաջանյան (AM), Արթուր Վոլոդյայի Պապիկյան (AM), Կարեն Ադոլֆի Կարակյան (AM)

(72) Միքայել Յուրիի Թունյան (AM), Լեւոն Գրիգորի Գրիգորյան (AM), Գայանե Սմբատի Բաբաջանյան (AM), Արթուր Վոլոդյայի Պապիկյան (AM), Կարեն Ադոլֆի Կարակյան (AM)

(73) Միքայել Յուրիի Թունյան, 0092, Երեւան, Սոլովովական 90, բն. 9 (AM), Լեւոն Գրիգորի Գրիգորյան, 0099, Երեւան, Շինարարների 15/1, բն. 70 (AM), Գայանե Սմբատի Բաբաջանյան, 0038, Երեւան, Հալաբյան 31, բն. 19 (AM), Արթուր Վոլոդյայի Պապիկյան, 0012, Երեւան, Հր. Զոհարի 24, բն. 29 (AM), Կարեն Ադոլֆի Կարակյան, 0064, Երեւան, Ա. Բաբաջանյան 67, բն. 6 (AM)

(54) Էքստրուդեր

(57) Գյուտը վերաբերում է մամլիչներին, մասնավորապես՝ էքստրուդերներին եւ կարող է կիրառվել օրթոպեդիկ ստոմատոլոգիայում եւ ատամնապրոթեզային տեխնիկայում:

Էքստրուդերն ունի բեռնախցիկային բունկերով իրան, դրա մեջ տեղակայված պտուտակների եւ կողային մակերեսային վրա շառավղային անցքեր ունեցող բաժակ: Բաժակը կատարված է պտուտակների առանցքով տեղաշարժվելու հնարավորությամբ: Բաժակի անցքերն ունեն կարգավորման հնարավորություն: Անցքերին միակցված են տարբեր տրամագծեր ունեցող ձեւավորող խողովակներ, որոնց վրա տեղակայված են սառնեցման թիթեղիկներ:

Ընդլայնվում են էքստրուդերի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում է աշխատանքի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 2038 (13) A2
C03C 3/076

C03C 4/00

(21) AM20070035 (22) 30.03.2007

(42) 01.06.2007

(71) Նորա Մովսեսի Հարությունյան (AM), Թոնիկ Արսենի Ավագյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM), Յուլյա Սերգեյի Սիմոնյան (AM)

(72) Նորա Մովսեսի Հարությունյան (AM), Թոնիկ Արսենի Ավագյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM), Յուլյա Սերգեյի Սիմոնյան (AM)

(73) Նորա Մովսեսի Հարությունյան, 0041, Երեւան, Էրեբունու 11, բն.30 (AM), Թոնիկ Արսենի Ավագյան, 0008, Երեւան, Աճեմյան փող. 2-րդ սրբ. 1 (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան, 0012, Երեւան, Վաղարշյան 21, բն. 26 (AM), Յուլյա Սերգեյի Սիմոնյան, 0026, Երեւան, Արշակունյաց 49, բն. 11 (AM)

(54) Ապակի

(57) Գյուտը վերաբերում է ապակիների բաղադրությանը, մասնավորապես՝ գունավոր ապակիների, եւ կարող է կիրառվել տեսակավոր եւ տարային ապակե ամանեղենի, շինարարական նյութերի արտադրության համար:

Ապակին ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ. %. SiO_2 ՝ 47,22 - 55,45, Al_2O_3 ՝ 9,74 - 18,50, Fe_2O_3 ՝ 0,82 - 2,64, FeO ՝ 0,21 - 0,72, TiO_2 ՝ 0,12-0,26, CaO ՝ 6,29 - 8,42, MgO ՝ 2,92 - 2,98, P_2O_5 ՝ 0,03 - 0,21, MnO ՝ 0,04 - 0,24, K_2O ՝ 1,96 - 3,40, Na_2O ՝ 14,43 - 17,67, $NaCl$ ՝ 0,25 - 0,40, AlF_3 ՝ 0,10 - 0,30:

Բարձրացվում է ապակու կայունությունը բյուրեղացման նկատմամբ եւ ընդլայնվում մշակման ջերմային միջակայքը:

(51) (2006) (11) 2039 (13) A2
C07C 337/00

(21) AM20070032 (22) 20.03.2007

(42) 02.04.2007

(71) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Տարիել Վլադիմիրի Ղոչիկյան (AM), Էդգար Վիլիկի Հարությունյան (AM), Մելանյա Աշոտի Սամվելյան (AM), Վիլիկ Սիրակի Հարությունյան (AM), Աիդա Ավետիսի Ավետիսյան (AM)

(73) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) 1,4-երկտեղակալված թիոսեմիկարբազիդների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիային, մասնավորապես՝ 1,4-երկտեղակալված թիոսեմիկարբազիդի ածանցյալների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել բժշկությունում եւ օրգանական սինթեզում:

Համապատասխան հիդրազիդները եւ իզոթիոցիանատները ենթարկում են փոխազդեցու-

թյան եթիլային սպիրտի միջավայրում: Պրոցեսը կատարում են երկու փուլով. առաջին փուլում ռեագենտները խառնում են եւ պահում 1 ժամ, իսկ երկրորդ փուլում խառնուրդը եռացնում են 0.5 ժամվա ընթացքում:

Մեծացվում է արգասիքի ելքը եւ կրճատվում պրոցեսի տեւողությունը:

(51) (2006) (11) 2040 (13) A2

C07D 249/00

(21) AM20070031 (22) 20.03.2007

(42) 02.04.2007

(71) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
(72) Տարիել Վլադիմիրի Ղոչիկյան (AM), Էդգար Վիլիկի Զարությունյան (AM), Մելանյա Աշոտի Սամվելյան (AM), Վիլիկ Սիրակի Զարությունյան (AM), Աիդա Ավետիսի Ավետիսյան (AM)

(73) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)

(54) **3,4-երկտեղակալված-5-մերկապտա-1,2,4-տրիազոլների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիային, մասնավորապես՝ 3,4-երկտեղակալված-5-մերկապտա-1,2,4- տրիազոլների ածանցյալների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել բժշկությունում եւ օրգանական սինթեզում:

Համապատասխան ացիլթիոսեմիկարբազիդները ենթարկում են ցիկլացման ալկալու 8%-անոց ջրային լուծույթով:

Մեծացվում է արգասիքի ելքը եւ կրճատվում պրոցեսի տեւողությունը:

(72) Աիդա Ավետիսի Ավետիսյան (AM), Իսկուհի Լեւոնի Ալեքսանյան (AM), Վոլոդյա Զրայրի Դուրգարյան (AM), Կոնստանտին Գրիգորի Ղարագոզյան (AM), Միխայիլ Վլադիմիրի Լվով (AM), Եվգենիա Գուրգենի Ջանփոլադյան (AM)

(73) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM), «ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Զասրայան 7 (AM)

(54) **Հակաառիթմիկ ակտիվություն ունեցող 2-(1-պրոպոքսիէթիլ)-4-մէթիլֆուրո[3,2-ց]իսինոլինի ածանցյալների քլորաջրածնային աղեր**

(57) Սինթեզված են հակաառիթմիկ ակտիվություն ունեցող 2-(1-պրոպոքսիէթիլ)-4-մէթիլֆուրո[3,2-ց]իսինոլինի ածանցյալների քլորաջրածնային աղեր, մասնավորապես՝ 2-(1-պրոպոքսիէթիլ)-4-մէթիլ-8-մէթոքսի-ֆուրո[3,2-ց]իսինոլինի, 2-(1-պրոպոքսիէթիլ)-4-մէթիլ-8-բրոմ-ֆուրո[3,2-ց]իսինոլինի եւ 2-(1-պրոպոքսիէթիլ)-4-մէթիլ-6-մէթոքսի-ֆուրո[3,2-ց]իսինոլինի քլորաջրածնային աղերը:

Միացությունները ստանում են բենզ-տեղակալված 2-(1-քլոր-1-բրոմէթիլ)-4-մէթիլ-2,3-երկիդրոֆուրո[3,2-ց]իսինոլինների նատրիումի պրոպիլատի հետ փոխազդեցությամբ՝ բացարձակ պրոպանոլի միջավայրում տաքացման պայմաններում, 2-(1-պրոպոքսիէթիլ)-4-մէթիլ-ֆուրո[3,2-ց]իսինոլինների հետագա փոխակերպումով աղերի:

Բարձրացվում է միացությունների հակաառիթմիկ ակտիվությունը:

(51) (2006) (11) 2041 (13) A2

C07D 491/00

(21) AM20070038 (22) 16.04.2007

(42) 01.06.2007

(71) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM), «ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(51) (2006) (11) 2042 (13) A2

C09B 61/00

(21) AM20070001 (22) 10.01.2007

(42) 02.04.2007

(71) Հակոբ Կարապետի Բարսեղյան (AM)
(72) Հակոբ Կարապետի Բարսեղյան (AM)
(73) Հակոբ Կարապետի Բարսեղյան, 3123, Գյումրի, Արագածի 6-րդ թաղամաս 2, բն.11 (AM)

(54) **Սեղանի ճակնդեղից փոշենման սննդային ներկանյութի ստացման եղանակ**

(57) Սեղանի ճակնդեղի արմատապտուղները լվանում են, լվացած ճակնդեղը ենթարկում են մակերեւութային ջերմային մշակման 126,8-132,5°C ջերմաստճանում, ապա հեռացնում են կեղեւը, մանրացնում, մանրացված ճակնդեղը ենթարկում են դիգեստացիայի (եփման) 105°C ջերմաստճանում 10-20 րոպեի ընթացքում եւ տրորում: Ստացված զանգվածը համասեռացնում են եւ չորացնում 135°C ջերմաստճանում փոշիացման մեթոդով, մինչեւ ներկանյութի փոշենման վիճակը:

Ստացվում է լայն գունային գամմա ունեցող ներկանյութ, բարձրացվում է դրա ջերմակայունությունը, նկ. 1:

(51) (2006) (11) 2043 (13) A2
C12G 1/00

(21) AM20070041 (22) 25.04.2007
(42) 02.07.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Ալեքսանդր Մնացականի Սամվելյան (AM), Գարուշ Ալեքսանդրի Սամվելյան (AM), Արտեմ Արամի Զրադացյանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Աղանդերային կապոր գինու պատրաստման եղանակ**

(57) Խաղողը սառեցնում են -12... - 18°C ջերմաստճանում եւ ապասառեցնում: Ապա խաղողը ջարդում են եւ չանջազատում, ստանալով փուլ: Փուլը սուլֆիտացնում են, տաքացնում մեկ ժամվա ընթացքում 65-70°C ջերմաստճանում եւ հովացնում մինչեւ 20-25°C ջերմաստճան: Փուլըն ավելացնում են խմորասկերի մաքուր կուլտուրա եւ խմորում, անջատում քաղցուն եւ սպիրտացնում այն մինչեւ 16 ծավալ. % թնդությունը: Օգտագործում են «Չարենցի», «Կարմրահյութ», «Ներկառատ» կամ «Արտաշատի կարմիր» խաղողի տրոտերը:

Բարձրացվում է գինու որակը, բարելավվում են զգայարանական հատկությունները:

(51) (2006) (11) 2044 (13) A2
C12M 1/00

(21) AM20070039 (22) 16.04.2007
(42) 02.07.2007

(71) Արտուշ Յովսեփյան (AM)

(72) Արտուշ Յովսեփյան (AM), Լեւոն Մարկոսյան (AM), Ռուբեն Մարկոսյան (AM), Ռուզաննա Յովհաննիսյան (AM)

(73) Արտուշ Յովսեփյան, 0056, Երեւան, Լվովյան 81/82, բն. 27 (AM)

(54) **Մանրէների աճեցման կենսատեխնոլոգիական գործընթացների կառավարման համակարգ**

(57) Համակարգն ունի մանրէների աճեցման կենսատեխնոլոգիական գործընթացների կառավարման միկրոհսկիչին զուգահեռ աշխատող համակարգիչ, որը ինտերֆեյս հանգույցով հաջորդաբար միացված է RS232 ինտերֆեյսով միկրոհսկիչին, իսկ միկրոհսկիչի սենսորների եւ տվիչների միջոցով միացված է սեփական անալոգաթվանշանային փոխակերպիչին համակարգչի համաձայնեցված աշխատանքն ապահովող զուգահեռ պորտով:

Համակարգչային կառավարման համակարգն ունենալով ծրագրավորման չորս հավելված, հնարավորություն ունի աշխատելու ինքնավար միկրոհսկիչային, ինքնավար համակարգչային եւ RS232 ինտերֆեյսային ռեժիմներում: Առաջին՝ ինքնավար միկրոհսկիչային ռեժիմում գործում է միայն միկրոհսկիչը, երկրորդում՝ միայն համակարգիչը: Ծրագրի երրորդ եւ չորրորդ հավելվածներով՝ RS232 ինտերֆեյսային ռեժիմում միաժամանակ իրար զուգահեռ գործում են եւ համակարգիչը, եւ միկրոհսկիչը՝ ապահովելով մանրէների աճեցման կենսատեխնոլոգիական գործընթացների հուսալի ավտոմատ կառավարումը, որոնցից մեկի աշխատանքի խափանման դեպքում մյուսը աշխատանքի ֆունկցիան վերցնում է իր վրա ու հուսալի ավարտում մանրէների աճեցման կենսատեխնոլոգիական գործընթացները:

Բարձրացվում է համակարգի աշխատանքի հուսալիությունը, 1նկ. :

(51) (2006) (11) 2045 (13) A2

C12P 13/06

C12P 13/20

(21) AM20070027 (22) 15.03.2007

(42) 01.06.2007

(71) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ (AM)

(72) Կարինե Գեորգիի Դյուկովա (AM), Միքայել Ղուկասի Զալեբյան (AM), Արթուր Ալբերտի Զամբարձումյան (AM), Ղուկաս Պետրոսի Զալեբյան (AM), Արմեն Եղիշի Աղաջանյան (AM)

(73) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ, 0056, Երեւան, Գյուրջյան 14 (AM)

(54) L-Ասպարագինաթթվից D-ասպարագինաթթվի եւ L-ալանինի միաժամանակյա ստացման եղանակ

(57) Միկրոալիքային վառարանում տեղադրված տեֆլոնե ավտոկլավում L-ասպարագինաթթուն ռացեմացնում են ջերմամշակելով եւ 35%-անոց աղաթթվի լուծույթում 3.5-5 ժամ եռացնելով: Ստացված D,L-ասպարագինաթթվի խառնուրդը կենսակերպափոխում են, որի արդյունքում ստացված L-ալանինի եւ D-ասպարագինաթթվի լուծույթը գունազրկում են, զտում եւ ծծմբական թթվով թթվեցնում, D-ասպարագինաթթուն նստեցնում են, զտում, լվանում, D-ասպարագինաթթվի բյուրեղները չորացնում են եւ գտվածքը աղազրկում են էլեկտրադիալիզի միջոցով: Այնուհետեւ աղազրկված գտվածքը անցկացնում են անիոնափոխանակային խեժով, շոգիացնում, L-ալանինի բյուրեղները չորացնում:

Բարձրացվում է L-ալանինի եւ D-ասպարագինաթթվի ելքը եւ մաքրությունը:

(51) (2006) (11) 2046 (13) A2

C22B 15/00

C22B 3/00

(21) AM20070062 (22) 06.06.2007

(42) 02.07.2007

(71) Լազար Երեմի Սարգսյան (AM), Վահագն Անատոլիի Շահնազարյան (AM), Վահե Աշոտի Ախաբեջանյան (AM)

(72) Լազար Երեմի Սարգսյան (AM), Վահագն Անատոլիի Շահնազարյան (AM), Վահե Աշոտի Ախաբեջանյան (AM)

(73) Լազար Երեմի Սարգսյան, 0033, Երեւան,

Կյուլաբենկյան 29, բն.22 (AM), Վահագն Անատոլիի Շահնազարյան, 0079, Երեւան, Մառի 12, բն.23 (AM), Վահե Աշոտի Ախաբեջանյան, 0033, Երեւան, Բաղրամյան 51, բն.3 (AM)

(54) Պղնձի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մետաղագործությանը, մասնավորապես՝ քալկոպիրիտից պղնձի ստացման եղանակներին:

Դիաֆրագմային էլեկտրոլիզային գուռի անոդային եւ կաթոդային բաժանմունքները հավասարապես լցնում են նատրիումի քլորիդի ջրային լուծույթով, ապա անոդային բաժանմունքի մեջ ավելացնում են տարրալուծմանը ենթակա քալկոպիրիտային խտանյութը, 10-12 ժամվա ընթացքում ներփչում են օդ եւ խառնում 80-85°C ջերմաստիճանում: Առանձնացնում են պղնձի(I) քլորիդի լուծույթը, մաքրում այն խառնուկներից, մաքրված լուծույթը ենթարկում են փոխազդեցության նատրիումի հիդրօքսիդի հետ, ստացված պղնձի երկօքսիդը վերականգնում են ջրածնով մինչեւ փոշենման պղնձի ստացումը, ապա վերջինը հալում են:

Ապահովվում է եղանակի պարզեցումը եւ բարձր արդյունավետությունը:

(51) (2006) (11) 2047 (13) A2

C23C 12/00

(21) AM20070036 (22) 05.04.2007

(42) 02.05.2007

(71) Գուրգեն Սարգիսյանի Զովսեփյան (AM)

(72) Գուրգեն Սարգիսյանի Զովսեփյան (AM), Առնակ Վրուրիկի Զովասափյան (AM), Սոնա Ոսկանի Վարդանյան (AM), Սամվել Վաչիկի Առաքելյան (AM), Զրանտ Աղաջանի Լեւոնյան (AM)

(73) Գուրգեն Զովսեփյան, Երեւան, Թոթովենցի 1/1, բն. 35 (AM)

(54) Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային գործիքանյութը յուղազերծում են, ենթարկում գալվանապատման՝ կիտրոնաթթվի, կալիումի պերմեթատի, կոբալտի սուլֆատի եւ բորական թթվի լուծույթում, այնուհետեւ չորացնում, տաքացնում

ջրածնի միջավայրում, այդ ջերմաստիճանում պահում, հովացում, ապա կրկին չորացնում եւ ենթարկում թրծաթողման 300 - 500°C ջերմաստիճանում, ընդ որում գալվանապատումը կատարում են 65-75°C ջերմաստիճանում հոսանքի 5Ա/մ², իսկ ջրածնի միջավայրում տաքացումն իրականացնում են 1150-1200°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) (2006) (11) 2048 (13) A2
C23C 14/00
C30B 23/02
B32B 33/00

(21) AM20070057 (22) 21.05.2007
(42) 01.06.2007

(71) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM)
(72) Վահագն Պետրոսյան (AM), Արմեն Կուզանյան (AM)
(73) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM)

(54) **Նուրբ թաղանթների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է նուրբ թաղանթների ստացմանը, մասնավորապես՝ մեծաչափ, համասեռ հաստությամբ բարակ թաղանթների ստացմանը լազերային փոշենստեցման եղանակով:

Վակուումային խցիկում թիրախի մոտ տեղադրում են ճեղք ունեցող դիմակ, որի ճեղքի օգնությամբ պլազմային ջահից առանձնացնում են հավասար զանգվածափոխադրման արագություն ունեցող նեղ փունջ: Այդ ճեղքի միջով կատարում են թիրախի նյութի լազերային փոշենստեցում հավասարաչափ պտտվող տակդիրի վրա: Թիրախը եւ տակդիրը շարժում են միմյանց նկատմամբ որոշակի օրենքով փոփոխվող արագությամբ՝ վերջինիս տրամագծի երկայնքով, այնպես, որ տակդիրի եւ թիրախի վրա լազերային ճառագայթի կիզակետի միջև հեռավորությունը մնա հաստատուն:

Ապահովվում է ցանկացած մեծության, համասեռ հաստությամբ նուրբ թաղանթների ստացումը, 2 նկ.:

(74) Ա. Պետրոսյան

(51) (2006) (11) 2049 (13) A2
E04H 9/12
E04B 1/19

(21) AM20070065 (22) 08.06.2007
(42) 02.07.2007

(71) «ՎՊԵԿՏԻ» ՓԲԸ (AM)
(72) Ալեքսանդր Սահակյան (AM), Ռուբեն Սահակյան (AM)
(73) «ՎՊԵԿՏԻ» ՓԲԸ, 0051, Երեւան, Մամիկոնյանց 48 (AM)

(54) **Սեյսմակայուն բազմահարկ շենքի համակցված կոնստրուկտիվ համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է բազմահարկ շենքերի համակցված կոնստրուկտիվ համակարգերին, որոնք կառուցվում են սովորական եւ սեյսմիկ պայմաններում, նույն թվում, բարձր հողմաքեռնվածքի (85 կՊ/մ²) գոտիներում եւ բարձր սեյսմիկություն (9 բալլ) ունեցող գոտիներում: Համակարգն ունի կենտրոնական դիրք զբաղեցնող ծավալատարածական ուղղաձիգ կրող կառուցատարր, հողավոր հիմնակմախք, հարկով միակտոր ծածկի հարթ սալեր: Հողավոր հիմնակմախքի երկաթբետոնե սյուները շրջապատում են կրող կառուցատարրը: Կրող կառուցատարրը շենքի յուրաքանչյուր հարկում կազմված է փակ ուրվագիծ ունեցող, իրար հարող եւ բլոկ գոյացնող խորշերի համախմբությունից: Խորշերից յուրաքանչյուրն անխզով է, միաձույլ, հարկի բարձրությամբ: Կրող կառուցատարրը ձեւավորված է փոխկապակցված միաձույլ բլոկների համախմբությունից, որը գոյացնում է բազմալարուս, փակ, շենքի ամբողջ բարձրությամբ միաձույլ կառուցվածք: Միաձույլ բլոկը ձեւավորված է ծածկի սալերով եւ միաձույլ պատերով: Պատերը ընդհանուր են հարակից խորշերի համար եւ գոյացնում են փակ կառուցվածք: Միաձույլ բլոկի պատերի կցվանքները իրականացված են միակցիչ տարրի տեսքով եւ ամրանավորված են շենքի ամբողջ բարձրությունն ունեցող ուղղաձիգ ամրաններով:

Բարձրացվում է կոնստրուկտիվ համակարգի ճկվածքառնչման կոշտությունը, 17 նկ.:

(51) (2006) (11) 2050 (13) A2
E21C 41/00

(21) AM20060199 (22) 14.12.2006
(42) 01.02.2007

(71) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM)
(72) Մաքսիմ Հակոբյան (AM), Բորիկ Մկրտչյան (AM), Աշոտ Մարգարյան (AM), Կարեն Մկրտչյան (AM), Վահե Հակոբյան (AM)

(73) Մաքսիմ Հակոբյան, 3309, Զաչարան, Չարենցի 5, բն. 4 (AM), Բորիկ Մկրտչյան, 0062, Երեւան, Գայի պող. 4, բն. 109 (AM)

(54) Լեռնային թափոնակույտների ձեւավորման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է Լեռնահանքային արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել Լեռնային ռելիեֆի պայմաններում օգտակար հանածոների հանքավայրերի բաց եղանակով մշակման ժամանակ: Թափոնակույտի ձեւավորումը սկսում են ձորի լանջերից մեկի երկայնքով նախնական հորիզոնական լիրաթումբ ձեւավորելով եւ վերջինից Լեռնային ապարները հակառակ լանջի ուղղությամբ վարընթաց լցնելով մինչեւ ձորի ամենախոր կետին ուղղահայաց՝ թափոնակույտի թույլատրելի ամենաբարձր նիշը, որից հետո թափոնակույտի զարգացումը հակառակ լանջի ուղղությամբ տանում են վերընթաց ուղղությամբ: Լեռնային ապարների լցումը վարընթաց եւ վերընթաց ուղղություններով իրականացնում են տրանսպորտային միջոցների աշխատանքի թույլատրելի թեքություններից փոքր թեքությամբ:

Մեծացվում է թափոնակույտների ծավալը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2051 (13) A2
F01C 1/00
F02B 53/00

(21) AM20070013 (22) 09.02.2007
(42) 01.06.2007

(71) Արթուր Արշակի Զավախյան (AM)
(72) Արթուր Արշակի Զավախյան (AM)
(73) Արթուր Արշակի Զավախյան, Երեւան, Ֆուչիկի 12, բն. 14 (AM)

(54) Ռոտորա-թիակավոր մեքենա

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը: Ռոտորա-թիակավոր մեքենան ունի շրջագծային հատվածքով սնամեջ անշարժ գլան եւ դրա նկատմամբ պտտվելու հնարավորությամբ եւ ապակետորն տեղակայված ռոտոր: Ռոտորի մեջ շառավղային հարթություններով արված են համաչափ դասավորված հիմնական հարթ

ակոսներ, որոնցում հետադարձ-առաջընթաց շարժման հնարավորությամբ տեղակայված են թիակներ: Մեքենան ունի թիակների կետորնախույս իներցիոն ուժերը հավասարակշռող նույնանման մեխանիզմներ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխան թիակի ռոտորի նկատմամբ շարժումը փոխանցում է ռոտորի նկատմամբ հետադարձ-առաջընթաց կամ պտտական շարժում կատարող հակակշռին, որի իներցիոն ուժով էլ հավասարակշռվում է այդ թիակի կետորնախույս իներցիայի ուժը:

Պարզեցվում է կառուցվածքը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2052 (13) A2
F03D 1/00

(21) AM20060196 (22) 11.12.2006
(42) 02.05.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Գրիգորի Հենրիկի Մանասարյան (AM), Արա Կարապետի Ամիրյան (AM), Հենրիկ Գրիգորի Մանասարյան (AM), Հրանտ Արայի Ամիրյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Հողմանիվ

(57) Գյուտը վերաբերում է հողմաներգետիկային, մասնավորապես՝ պտտման հորիզոնական առանցքով հողմաշարժիչներին:

Հողմանիվն ունի կունդի վրա գնդային առանցքակալների միջոցով տեղակայված թիակներ եւ կունդի մեկ կողմից ամրակցված գլանային զսպանակներ: Թիակների ետեւում տեղակայված են մեկ ծայրով զսպանակները սեղմող սեղմիչներ, իսկ կունդի վրա ամրակցված են հենակներ:

Ապահովվում է կառուցվածքի պարզեցումը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2053 (13) A2
F26B 9/00

(21) AM20070046 (22) 28.04.2007
(42) 02.07.2007

(71) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Չովա Գեղամի Մարտիրոսյան (AM)

(72) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Չովա Գեղամի Մարտիրոսյան (AM)

(73) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երեւան, Գոգուլի 5, բն.6 (AM), Չովա Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երեւան, Գոգուլի 5, բն. 6 (AM)

(54) Արեւային չորանոց

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ պտղաբանջարեղենի եւ այլ մթերքների արեւային չորացման սարքերին:

Արեւային չորանոցը կազմված է չորացման եւ ջերմակուտակման խցիկներից: Ջերմակուտակման խցիկն ունի օդի մուտքի պատուհաններ, կրող շրջանակ, դրա վրա ամրակցված ջերմամեկուսիչ կողապատեր եւ ցանցաձեւ կեղծ հատակ, որի վրա տեղակայված են ջերմակուտակիչ տարրեր:

Չորացման խցիկը տեղակայված է ջերմակուտակման խցիկի վերնամասում, ունի պատուհան ունեցող հետին պատ, վերնամասում տեղակայված օդի ելքի պատուհան, օդաքաշ խողովակ եւ ներսում տեղակայված ցանցային դարակաշարեր: Չորացման եւ ջերմակուտակման խցիկները ծածկված են լուսաթափանցիկ ծածկով: Չորանոցի ջերմակուտակման խցիկը շրջանի 3/4-ի ձեւ ունեցող սեգմենտ է, իսկ դրա ցանցաձեւ կեղծ հատակն իրականացված է սիմետրիկ ոլորված ժապավենի տեսքով՝ հորիզոնական հարթության նկատմամբ 90°-ից մինչեւ 0° փոփոխվող անկյուններով:

Պարզեցվում է չորանոցի կառուցվածքը, բարձրացվում է չորացման արդյունավետությունը, կրճատվում է չորացման տեւողությունը, 4 նկ.:

(73) Կարեն Վոլոդյայի Գասպարյան, 0035, Երեւան, Լեփսիուսի 10ա, բն. 18 (AM), Վահե Զրանտի Ղուկասյան, 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6-րդ թաղ. 19, բն. 19 (AM), Պատվական Ռուբենի Զախինյան, 0091, Երեւան, Մ. Մելիքյան 13, բն. 23 (AM)

(54) Զափերիզի ճկուն ժապավենի գլանափաթեթման եղանակ եւ դրա իրականացման սարք

(57) Գյուտը վերաբերում է գծային չափերի չափիչներում, մասնավորապես՝ ճկուն չափող ժապավենով չափերիզներում չափող ժապավենի գլանափաթեթման եղանակներին եւ չափերիզներին, որոնցում թմբուկի վրա ճկուն չափող ժապավենի փաթաթումն իրականացվում է ձեռքի կամ էլեկտրամեխանիկական շարժաբերով:

Ըստ հայտարկվող եղանակի արտաթողված ժապավենը շարժաբերի միջոցով բազմաշարք փաթաթում են չափերիզի թմբուկի վրա, որի համար ճկուն ժապավենին թմբուկի պտտման առանցքին զուգահեռ ուղղությամբ հաղորդում են հետադարձ-լայնական շարժում:

Սարքը ներառում է իրանի մեջ պտտվելու հնարավորությամբ տեղակայված թմբուկ, դրան մեկ ծայրով ամրակցված չափող ճկուն ժապավեն, որն ունի թմբուկի վրա փաթաթվելու եւ թմբուկից արտաթողվելու հնարավորություն, թմբուկի շարժաբեր: Զափերիզն ունի նաեւ չափող ճկուն ժապավենին թմբուկի պտտման առանցքին զուգահեռ ուղղությամբ հետադարձ-լայնական շարժում հաղորդող լայնական մատուցման մեխանիզմ եւ մատուցման մեխանիզմի շարժաբեր:

Փոքրացվում են սարքի շառավղային չափերը, բարձրացվում է օգտագործման հարմարավետությունը, 2 անկախ կետ, 13 նկ.:

(51) (2006) (11) 2054 (13) A2
G01B 3/02

(21) AM20070003 (22) 12.01.2007
(42) 02.05.2007

(71) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Վահե Զրանտի Ղուկասյան (AM), Պատվական Ռուբենի Զախինյան (AM)

(72) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Վահե Զրանտի Ղուկասյան (AM), Պատվական Ռուբենի Զախինյան (AM)

(51) (2006) (11) 2055 (13) A2
G01H 9/00
G01H 11/00

(21) AM20060209 (22) 25.12.2006
(42) 01.06.2007

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Ալբերտ Կնյազի Պողոսյան (AM), Արայիկ

Անդրեյի Թամրազով (AM), Արտակ Օսիկի Բախշ-յան (AM), Արշակ Ռոբերտի Իսաջանյան (AM) (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Թրթռաչափական կերպագրություն

(57) Գյուտը վերաբերում է թրթռաչափական տեխնիկային, մասնավորապես՝ արգելակային սարքերում թրթռումների վերահսկման օպտիկական սարքերին եւ կարող է օգտագործվել թրթռումների պարամետրերի եւ արգելակային մոմենտի չափման համար:

Սարքն ունի վերահսկվող օբյեկտի վրա տեղադրված հայելի, թրթռազգայուն տարր, լարման ու կարգավորվող ուժեղացման գործակցով ուժեղարարներով վերլուծող հանգույց, տեսչույթիչ եւ գրանցող սարք՝ համակարգիչ: Սարքը լրացուցիչ ունի ֆոտոէլեմենտ եւ լազեր, որի ճառագայթը թրթռազգայուն տարր է: Տեսչույթիչը ամրակցված է բարձակային ուժաչափի վրա, որը լծակի միջոցով հպված է վերահսկվող օբյեկտի հենարանին: Բարձրացվում է չափումների ճշգրտությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2056 (13) A2

G01M 17/00

G01M 17/007

G01M 17/02

(21) **AM20060206** (22) **22.12.2006**

(42) 01.03.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Գագիկ Դմիտրի Զովհաննիսյան (AM), Սամվել Ռաֆիկի Սիրեկանյան (AM), Վարդան Ալեքսանի Վարդանյան (AM), Վահան Չարմիկի Մելիքյան (AM), Վահան Գեորգի Սարգսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Պնեւմատիկական դողի շառավղային ձեւափոխության որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է տրանսպորտային մեքենաշինության բնագավառին, մասնավորա-

պես՝ անվավոր մեքենաների ընթացային համակարգերի փորձարկումներին եւ կարող է օգտագործվել պնեւմատիկական դողերի շառավղային ձեւափոխությունների որոշման համար:

Փորձարկվող դողով անիվը տեղակայում են փորձարկիչ կամրջակի վրա, որի մեկ կողմում նախապես տեղակայում են կոշտ անիվ, ստեղծում են նորմալ բեռնվածք, հաղորդում հավասարաչափ շարժում, չափում կամրջակի կենտրոնի պտտման շառավղի իրիզոնական հարթությունում եւ համապատասխան բանաձեւի միջոցով որոշում շառավղային ձեւափոխությունը: Պարզեցվում է նորմալ բեռնվածքից կախված պնեւմատիկական դողի շառավղային ձեւափոխության բնութագրի ստացումը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2057 (13) A2

G01N 27/00

H01L 27/14

(21) **AM20060205** (22) **22.12.2006**

(42) 02.05.2007

(71) Վլադիմիր Հարությունյան (AM), Վալերի Առաքելյան (AM), Վարդան Գալստյան (AM), Խաչատուր Մարտիրոսյան (AM), Հայկ Ասրիյան (AM), Պատրիկ Սուքիասյան (FR)

(72) Վլադիմիր Հարությունյան (AM), Վալերի Առաքելյան (AM), Վարդան Գալստյան (AM), Խաչատուր Մարտիրոսյան (AM), Հայկ Ասրիյան (AM), Պատրիկ Սուքիասյան (FR)

(73) Վլադիմիր Հարությունյան, 0010, Երեւան, Նալբանդյան 17, բն. 18 (AM), Վալերի Առաքելյան, 0101, Երեւան, Ավան, Նարեկացու թաղ. 34, բն. 26 (AM), Վարդան Գալստյան, 0105, Երեւան, Սվաճյան 44, բն. 56 (AM), Խաչատուր Մարտիրոսյան, 0022, Երեւան, Ավան-Առինջ 4/1, բն. 35 (AM), Հայկ Ասրիյան, 0069, Երեւան, Դավիթ Անհաղթի 23/1, բն. 15 (AM), Պատրիկ Սուքիասյան, 18 ռու Ալեքսանդր Դյումա, 78470, Սան Ռեմի լե Շեվրոզ (FR)

(54) Ծակոտկեն սիլիցիումի կառուցվածքով գազային տվիչ (տարբերակներ)

(57) Գյուտը վերաբերում է ծակոտկեն սիլիցիումի կառուցվածքով գազային տվիչներին, մասնավորապես՝ այնպիսի տվիչներին, որոնք զգայուն են թունավոր, պայթավտանգ, վերականգնող եւ մարդու կյանքի համար վտանգ ներկայացնող գազերի նկատմամբ:

Տվիչն ունի իրար հաջորդող տարրեր՝ մետաղական հպակներ, կատալիզային շերտ, 10-300 նմ հաստությամբ մետաղ-օքսիդային թաղանթ, ծակոտկեն սիլիցիումային թաղանթ, միաբյուրեղային սիլիցիումային տակդիր, մետաղական հպակային տիրույթ, պաշտպանիչ մեկուսիչ շերտ եւ պլանար էլեկտրական ջեռուցիչ: Ծակոտկեն սիլիցիումային թաղանթն ունի ըստ մակերեսային եւ ըստ թաղանթի խորության ծակոտկենության փոխադրահայաց գրադիենտներ:

Տվիչի իրականացման մյուս տարբերակում այն լրացուցիչ ունի մետաղական հպակների եւ կատալիզային շերտի միջեւ տեղակայված սիլիցիումի երկօքսիդի բարակ թաղանթ:

Ապահովվում է մեկ սարքի միջոցով տարբեր գազերի միաժամանակյա հայտնաբերումը տարբեր չափայնություն ունեցող բնութագրերի հիման վրա, բարձրացվում է տվիչի զգայունությունը աշխատանքային ջերմաստիճանի նվազեցման շնորհիվ, ապահովվում է օգտագործման հարմարավետությունը, 2 անկախ կետ, 6 նկ.:

(51) (2006) (11) 2058 (13) A2

G01N 27/22

(21) AM20070033 (22) 23.03.2007

(42) 01.06.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Գուրգեն Մարկոսի Եղիազարյան (AM), Սարգիս Վահանի Սանոյան (AM), Սուրեն Էդուարդի Միքայելյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Խոնավության տվիչ**

(57) Գյուտը վերաբերում է չափիչ տեխնիկային, մասնավորապես՝ խոնավության ունակային տվիչներին, որոնցում արտապատկերվում է ունակության կախվածությունը խոնավությունից, եւ կարող է օգտագործվել գյուղատնտեսության մեջ եւ արդյունաբերության տարբեր բնագավառներում՝ միջավայրի խոնավության չափման սարքերում, վերահսկման եւ կարգավորման ազ-

րոարտադրական գործընթացներում:

Տվիչը կազմված է հարթ մեկուսիչ հիմնակմախքից եւ դրա վրա պատված էլեկտրոդներից: Էլեկտրոդները արտաքին կողմից պատված են դիէլեկտրիկի շերտով: Չափման միջակայքը կախված է դիէլեկտրիկի նյութից եւ դրա շերտի հաստությունից:

Պարզեցվում է տվիչի կառուցվածքը, բարձրացվում է հուսալիությունը եւ ճշգրտությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2059 (13) A2

G09B 19/02

G09B 23/00

(21) AM20070034 (22) 23.03.2007

(42) 02.05.2007

(71) Սամվել Վահանի Մովսիսյան (AM)

(72) Սամվել Վահանի Մովսիսյան (AM)

(73) Սամվել Վահանի Մովսիսյան, 0511, Արագածոտնի մարզ, գյուղ Մաստարա (AM)

(54) **Մաթեմատիկական կշեռք**

